Տարածքային քաղաքականություն և աջակցության համակարգում

Ներածություն

Տարածքային քաղաքականության և աջակցության համակարգման բնագավառում ԵՄ օրենսդրությունը կազմող հիմնական ակտերը[1] նախատեսված են նախաանդամակցության շրջանում համապատասխան երկրներին կամ անդամ պետություններին ցուցաբերվող աջակցության համակարգման համար: Այդ իսկ պատճառով այդ օրենսդրությունն առայժմ կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում, և իրականացվող միջոցառումների ներկա փուլում բացակայում է նշված ակտերի օրենսդրական համապատասխանեցման անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, Եվրոպական Միության Հանձնաժողովն անդամակցության գործընթացն ստանձնած երկրներին առաջարկում է ընդունել ռազմավարական փաստաթուղթ՝ սահմանելով տարածքային քաղաքականության հիմնական սկզբունքները և գերակայությունները: Նմանատիպ փաստաթղթի ընդունումը և այդ կապակցությամբ նկատվող առաջընթացը հատուկ ուշադրության են արժանանում Հանձնաժողովի կողմից անդամակցության գործընթացում համապատասխան երկրների առաջընթացի վերաբերյալ ընթացիկ հաշվետվություններում: Չնայած, որ ՀՀ-ում գործում են մի շարք տարածքային ծրագրեր, ինչպիսիք են՝ «Աղետի գոտու վերականգնման ծրագիր», «Սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիր», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը[2] և այլն, Հայաստանում տարածքային քաղաքականության բնագավառում բացակայում է միասնական շրջանակային իրավական ակտ, որը կսահմաներ տարածքային քաղաքականության և (կամ) աջակցության ընդհանուր նպատակները, աջակցության տրամադրման չափանիշները և ընթացակարգերը և կծառայեր որպես տարածքային քաղաքականության ոլորտում հիմնարար օրենք:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը նախատեսում է նաև վիճակագրական տվյալներ հավաքագրելու նպատակով տարածքային միավորների դասակարգման հետ կապված խնդիրների կարգավորումը: Մասնավորապես, ԵՄ օրենսդրությունը նախատեսում է տարածքային միավորների դասակարգում ըստ սահմանված չափանիշների՝ ապահովելու համար այդ միավորների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը, կազմումը և տրամադրումը: Միևնույն ժամանակ ԵՄ օրենսդրությունը նպատակ ունի համադրելի դարձնել տարածքային բաժանումը ԵՄ տարբեր անդամ երկրներում՝ մշակելով միասնական մոտեցում: Հարկ է նշել նաև, որ համաձայն ԵՄ մոտեցման, տարածքային քաղաքականությունը իրականացվում է ըստ վերը նշված բաժանման, ինչը հնարավորություն է տալիս լուծելու տնտեսական, դեմոգրաֆիկ և այլ խնդիրներ (Տես՝ Ազգային ծրագիր,Գլուխ 10 Վիճակագրություն) :

2009 թվական

Հայաստանի Հանրապետությունում տարածքներին ցուցաբերվող աջակցությունը համակարգելու, աջակցություն տրամադրելու համար ընդհանուր հիմքեր, չափանիշներ և ընթացակարգեր սահմանելու նպատակով կմշակվի «Տարածքային աջակցության մասին» շրջանակային օրենքի նախագիծ:

---

[1] 1999թ. հունիսի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1267/1999՝ «Նախաանդամակցության կառուցվածքային քաղաքականության գործիքների հաստատման մասին», 1999թ. հունիսի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1268/1999՝ «Նախաանդամակցության շրջանում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թեկնածու երկրներում գյուղատնտեսական և գյուղական զարգացման համար նախաանդամակցային միջոցառումներին Համայնքի աջակցության մասին», 1999թ. հունիսի 21-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1266/1999՝ «Նախաանդամակցության ռազմավարության շրջանակներում թեկնածու երկրներին ցուցաբերվող աջակցության համակարգման և թիվ 3906/89 կանոնակագի մեջ փոփոխություն կատարելու մասին», 1998թ. դեկտեմբերի 18-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2760/98՝ «Phare ծրագրի շրջանակներում միջսահմանային համագործակցության ծրագրի իրականացման մասին»:

[2] ՀՕ-262 11.24.1998թ.:

1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2009						
1.	«Տարածքային աջակցության մասին» ՀՀ շրջանակային օրենքի նախագծի մշակում		ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	1-ին եռամսյակ	35	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					35	

2. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	-	Տարածքային քաղաքականության մշակման վերաբերյալ դասընթաց (10 օր/2007թ.)	Խորհրդատվություն, ռազմավարական ծրագրի մշակում